


ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Ազգային Պատրիարքարանի

(նախորդ)

ԱՏԵՆ ԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ



1882-3

ԲԱՅՈՒՄ 1882 ԱՄԻՆ

ՆԻՍՏ Ա.

20 ՄԱՅԻՍ 1882



Կ. ՊՕԼԵՍ

1882

9(47.925)

Ա. 23

ԱՁԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Printed in Turkey

ԲԱՅՈՒՄ 1882 ԱՄՍ

Ն Ի Ս Տ Ա.

20 ՄԱՅԻՍ 1882

ՆԱԽԱԳԱՀ. — Տէր Խորէն Արքեպիսկոպոս Նար-Պէյ (—ժ—ժ—)

ԱՏԵՆԱՊԵՏ. — Քրիստոստուր Էֆէնտի Ղազարոսեան (—ժ—ժ—)

ԱՁԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ

Ա. Վ. Իճակ

- 1 Սիմէօն Եպս. Սէֆէրեան
- 2 Ամբրոսիոս Վ. Ռուբինեան Բ. Պ
- 3 Կարապետ Քհ. Սէֆեան
- 4

Բ. Վ. Իճակ

- 5 Մատթէոս Եպս. Իզմիրեան
- 6 Պօղոս Վ. Խօրտամեան
- 7 Յովհաննէս Քհ. Մկրեան
- 8 Գրիգոր » Աճէմեան

Գ. Վ. Իճակ

- 9 Գրիգոր Եպս. Տ. Պօղոսեան
- 10 Յակոբ Վ. Ա. Փափաղեան
- 11 Ոսկակ Քհ. Տ. Սարգսեան Բ. Պ
- 12 Խորէն » Փէշիվանեան

Դ. Վ. Իճակ

- 13 Գէորգ. Վ. Բուսնուզլեան Բ
- 14 Եղիշէ » Ա. յվազեան
- 15 Յովհաննէս Վ. Արշարունի
- 16 Յովհ. Քհ. Հիւնքեարպէյէնտ.

Ե. Վ. Իճակ

- 17 Խորէն Արքեպ. Նար-Պէյ
- 18 Յովհաննէս Վ. Փափաղեան Բ
- 19 Գարեգին » Թաթարեան
- 20 Սուքիաս Քհ. Ստեփանեան

- Բ. Բացակայութիւն անաջին
- Բ. 2 » երկրորդ
- Բ. Պ » բանաւոր պատճառաւ

Ա. Վ. Իճակ

Գում-Գաբու, Կետիկ-Կաշա
Է. Գում-Գաբուի դուրս

- 21 Գրիգոր Պէրպէրեան
- 22 Կարապետ Աղարդմանեան
- 23 Համբարձում Մալապուլեան
- 24 Մինաս Գափամանեան

Բարթող Քիւրքճիպաշեան Բ. 2

Գէորգ Ապտուլլահեան Բ

27 Յ. Մէրեթ-Գուլի

28 Տիգրան Հիւնքեարպէյէնտ.

29 Աւետիս Սուրենեան

30 Տօքթ. Յ. Թիրեաքեան

31 » Ա. յվազեան

32 Գէորգ Ա. յվազեան

33 Յակոբ Եղիշեան

34

35

36

37

Բ. Վ. Իճակ

Պէշիկթաշ

38 Ալիքսան Խօրասանեան Բ. Պ

39 Բարսեղ Հալաճեան

40 Յովհաննէս Քէրէստէճեան

ԵՔՏի-Գաբու.

41 Լեւոն Քարամանեան Բ. 2

42 Մարուգէ Յընկեան Բ

43 Պօղոս Էնքսէրճեան Բ. 2

44 Մկրտիչ Քիւրքճիպաշեան Բ

Կապիւտար Ս. Խաչ

45 Սիմէօն Յէլէկեան Բ

46 Տօքթ. Յ. Շիշմանեան Բ. Պ

47

48

Խաչիւտար Ս. Կարապետ

49 Միհրան Պանճէգափուլ. Բ

50 Պօղոս Թորգոմեան Բ

51 Տրդատ Փափաղեան

52 Յակոբ Հաճիեան

Գ. Վ. Իճակ

Գասթըմ-Բաշա

53 Գասպար Զերազ

Բերա

54 Գրիգոր Սէլիմլիէճեան

55 Գրիգոր Օտեան Բ. Պ

56 Ղազար Հոյուեան

57 Յարութիւն Նորատունկ. Բ. Պ

58 Յարութիւն Պէլեան

59 Նշան Պօյաճեան Բ

60 Վիլիէն Օրմանեան

61 Տեղեմաք Էքսէրճեան

62

Միջագիւղ

63 Յակոբ Պ. Նորատունկ.

64 Տիգրան Եռսուֆեան

65 Մկրտիչ Գաղանճեան Բ. 2

66 Մկրտիչ Ճանրմեան

67

Պէյգօզ Է. Ղալաքիա

68 Միքայէլ Մաթիկօնեան

Դ. Վ. Իճակ

Քուզլուճուր Է. Իճատիէ

69 Մկրտիչ Մէլապուրեան

70

37357-4.2



2004

Գաղտնիքի	ԳԱՆՈՒԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՄՆԵՐ	Մուշ
71 Գաղտնիկ Յովակիմեան	Կարին	121 Ստեփան փառազեան Բ 2
72 Կարապետ Հազարեան	101 Սերովբէ Աղնաւորեան	Տիվրիկ
Նարյը-Գաբու	Քեօթանեա	122 Նշան Գարազաշ
73	102 Աղբիւնուպօլիս	Ջէյրուն Է. Մարաշ
Եկեմի-Մանալիկ Սամաթիոյ	103 Յակոբ Պարոնեան Բ 2	123
74	Նիկոմիդիա	Տրապիզոն
Թօփ-Գափու	104 Կարապետ Ս. Իւթիւնեան	124
75 Տօքթ. Կ. Հիւնքեարպէյ.	Ակն	Պադիսա
Էյուպ Ս. Եղիա Է. Ս.	105	125 Մելքոն Իսկէնտէրեան Բ 3
Աստուածածին	Հարանիսար	Տիգրանակերտ
76	106	126 Միհրան Զօսանեան
Գուրու-Չէշմէ	Արաբկիր	Վան
77 Համբարձում Իփէքեան	107 Կարապետ Խաչիկեան	127
Հիսար Է. Պօյաճի-Գիւղ	Բաղէշ	128
78 Սենեքերիմ Կիւլպէնկեան	108	129 Հայեպ Է. Այնքապ
Նոր-Գիւղ Է. Սրէնիա	Պրուսա	Սեբաստիա
79	109 Քրիստոստուր Դազարոսեան	130 Մկրտիչ Յ. Մէլիքեան
Պալատ	Եղովկիա	Ռուսնոգ
80 Տիգրան Բարադամեան	110	131
81 Մկրտիչ Կիւմրէնեան	Ամասիա	Կարս
82	111 Համբարձում Ալանաճեան	132 Արրահամ Յ. Այվազեան Բ 4
Քարակեօմրիկ	Բալու	Զմշկածագ
83 Յովհաննէս Թորոսեան	112 Յովհաննէս Աղնաւորեան Բ 4	133
84 Կարապետ Փանոսեան	Եղեսիա	Գաղատիա
Ե. Վիճակ	113 Յակոբ Իւթիւնեան Բ 2	134
Սամաթիա	Մանգրլիս	Ատանա
85 Ալիքսան Պէշիքեան	114	135
86 Մինաս Ճաֆնաֆեան	Հաճըն	Սղերդ
87 Նազարէթ Շահպազեան	115	136 Մատթէոս Ալէքսանեան Բ 3
88 Յարութիւն Թիւլեան	Երզնկա	Եօզդատ
89 Յակոբ Արշակ	116 Ռէթէոս Պէրպէրեան	137 Լօղօֆէթ Պալեօղեան
90 Սեպուհ Թիւլսիւզեան	Թէքիրտաղ	Մալաթիա
91 Մինաս Էմիրեան Բ	117 Տիգրան Գ. Սինանեան	138 Գէորգ Վարդանեան Բ
92 Վիլէն-Գապաճաճեան Բ 3	Կեսարիա	Իզմիր
93 Բազուր Երկանեան Բ	118 Գէորգ Գլըճեան	139 Պապի Պապօեան
94	Խաբէրդ	Եգիպտոս
Խասգիւղ	119	140 Ստեփան Գօշօղեան
95 Առաքել Ալթուն Տիւրքի	Պալքեք	
96 Սարգիս Քալուքեան	120	
97 Ռէթէոս Թաղէոսեան Բ		
98 Ռուբէն Պուլիւրեան		
99 Նիկողոս Թիւլպէնեան Բ 4		
100		

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

Ա. Բացումն ժողովին ի Ս. Նախագահէ .

Բ. Կարգումն առժամեայ Դիւանի .

Գ. Վաւերացումն Երեսփոխանական ընտրութեանց .

Ընդ առժամեայ նախագահութեամբ Տ. Խո. րէն Արքեպիսկոպոս Նար-Պէյի և առժամեայ Առնապետութեամբ Քրիստոստուր Էֆէնտի Դազարոսեանի՝ ատենը բացուեցաւ ժամը 4 ին ի ներկայութեան 76 Երեսփոխանաց :

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

Ա.

Բացումն ժողովին ի Սրբազան Նախագահի .

Առժամեայ Նախագահ Տ. Խորէն Արքեպիս. կոպոս Նար-Պէյ Աղգային ժողովը բացաւ հե. տեւալ նախագահական ճառով :

Տեա՛րք Երեսփոխանք .

Պատիւ ունիմ բանալ զառաջիկայ շրջան Աղգային ժողովոյդ յանուն այն բարձրանորհ Պատրիարքին որոյ սէրն ամենուս սրտին մէջն

է, և որոյ ներկայութիւնը պիտի ոգևորէ սոյն տարւոյն գումարմանց մէջ ունենալիք խորհուրդներն և աշխատութիւնները :

Այս յուզեալ և տարտամ վիճակին մէջ՝ դժբաղդարար Մայր-Դիւանը և Նախագահութիւնը չկրնար այսօր ճշգիւ Ձեզ ներկայել այն խնդիրներն որ նիւթ պիտի լինին չրջանիս մէջ Ձեր ազգօգուտ որոշմանց :

Սակայն ընդհանուր կերպով կրնամ ըսել թէ այն օրն յորում ունենանք զխնդութիւն տեսանել վերստին ի գլուխ ժողովոյս զՍ. Պատրիարքն, այն օրն Աղգային Երեսփոխանութիւնը պէտք է իւր առաջին խնդիր ընէ դաստիարակութեան խնդիրը :

Ո՛հ, չա՛տ յապաղեցաւ այն կենտաւտ խնդիրն իւր լուծումն ընդունիլ ի Ձեռք : Ալ ժամանակն է որ լուրջ կերպով առնուիմք զայն ի նկատ, եթէ Աղգին կեանքը կուզեմք և ոչ զմահ :

Թաղական տեսչութեան և ալ կախ մը. նոցած խնդիրներն պիտի յաջորդեն հետզհետէ, և Ձեզ պիտի մատակարարեն նիւթ առատ ի հանգէս Ձերումդ Աղգասիրութեան :

Մի միայն խօսք ներեցէք ըսել Ձեզ, Տեարք Երեսփոխանք, Ժողովոյն նիստերը այն ատեն կը լինին արգասաւոր՝ եթէ տիրէ ի մեզ միութիւն. և եթէ անձնիւր Երեսփոխան ի բաց թողու զանձնական շահ, կիրք և մտածութիւն:

Ս. Պատրիարք Հայրն կը յուսամ որ ի վերադարձին յիւր Աթոռ չունենայ այլ ևս զտրտութիւն ականատես լինելու անուրի վիճարանութեանց, որով Ազգին անգին ժամերը մերինին հետ կը վատնին վայրասլար և գործադիր իշխանութիւնը կը դժուարանայ Ազգին շէնք վարելու: Մեր միութեամբը դիւրացնեմք Ս. Պատրիարքին ծանր պաշտօնը, և նորա վշտերը մոռցնել ջանամք մեր գործունեայ ընթացքովն և ազգանուէր աշխատութեամբը:

Բարձրեալն Աստուած օրհնէ՝ զԺողովդ Ազգային, և շնորհէ՝ միոյ միոյ Երեսփոխանացդ երկարութիւն կենաց, և զօրութիւն և լոյս ի խորհուրդս բարիս՝ որ յօգուտ են Ազգիս: Տացէ՝ Տէր որ առաջիկայս նստու չըջան Ազգային Ժողովոյդ՝ լիցի քան զնախորդան ամենեւին առաւել օգտակար և առաւել արդիւնաւոր վասն Ազգին:

Բ.

Կարգում առժամեայ Դիւանի.

Նախագահական ճառին աւարտումէն յետոյ, Նորին Սրբազնութեան հրաւիրանօք և Ժողովոյ համութեամբ առժամեայ Դիւանը կազմուեցաւ, երկրագոյն Երեսփոխաններէն Ղազարոսեան Քրիստոստուր Էֆէնտի՝ Ատենայեւ և կրտսերագոյններէն Պէրպէրեան Ռէթէոս Էֆէնտի՝ Ատենադպիր բազմելով:

Տ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՔԷՆ. ՄԿՐԵԱՆ, — Նոր շրջանի բացմամբ գործողութեան սկսելէ առաջ՝ շնորհակալութեան քուէ կառավարիւմ

դադարեալ Մայր-Դիւանի անդամոց համար:

Երեսփոխանք Տ. Մկրեան Հօր առաջարկը կրկնելով, Ժողովն հակառակ Յ. Մէրեթի-Գուլի Էֆ.ի ընդդիմութեան, որ յանուն դադարեալ Մայր-Դիւանի կաղաչէր Ժողովոյ ժամանակը չսպառել շնորհակալութեան համար, Ժողովն ձեռամբարձ քուէիւք շնորհակալութիւն յայտնեց դադարեալ Մայր-Դիւանի անդամոց:

Հրաժարագիր Վարչութեան Ատենապետի

Վարչութեան Ատենապետ Տ. Երեսփ. Էֆ. Բեմն ելլելով խօսք ուղեց:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ինչպէս կը տեսնէք՝ Վարչութեան Ատենապետ Էֆ.ին խօսք կուղէ: Միւս կողմանէ մեր ներքին կանոնադրութեան Բ. յօդուածի համաձայն՝ առժամեայ Դիւանիս պաշտօնն է միմիայն ընտրութեանց վաւերացումն և Մայր-Դիւանի ընտրութիւնը կատարել տալ: Արդ, Ժողովոյդ կը մնայ յայտնել իւր կարծիքն թէ՛ կուղէ, լսել զԵրեսփ. Էֆ.:

ՄԷԼԻՔԵԱՆ Մ. ԷՖ. — Ձեմք գիտեք թէ Վարչ. Ատենապետ Էֆ. ի խօսելիքներն ինչ բաներ են, որպէսզի Ժողովս ըստ այնմ որոշէ թէ՛ հա՞րկ է օրէնքն բացառութիւն մը ընել թէ ոչ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — (Առ Վարչութեան Ատենապետ) Խօսիլ կուղէք, այլ սակայն Դիւանս չգիտեք թէ՛ Ձեր խօսելիքներն այսօրեայ երեսփոխանական ընտրութեանց թէ՛ ոչ՝ տարբեր խնդրոյ մը կը վերաբերի:

ԵՈՒՍՈՒՑԵԱՆ Տ. ԷՖ. — Կենսական տարբեր խնդրոյ մը վրայ պիտի խօսիմ:

ՊԱԼԵՕԶԵԱՆ Լ. ԷՖ. — Օրէնքն բացարձակ է այս մասին, մենք բնաւ իրաւունք չունինք աստ ընդունուած օրէնք մը քուէի դնել:

ԱՏԵՆԱՊԵՏ. ԷՖ. — Թէև օրէնքն չներեր, այլ սակայն, իբր բացառիկ պարագայ մը՝ Վարչութեան Ատենապետին կրնայ խօսք տրուիլ:

ՄԷՐԵԹ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Ժողովն կուղէ զԵրեսփ. Էֆ. լսել կամ ոչ, այդ մասին միջամտել չէ խօսք առնելուս նպատակը: Միայն թէ Պալեօզեան Էֆ. Վարչութեան Ատենապետին խօսք տրուելու դէմ խօսելով կըսէր որ օրէնքը քուէի չդրուիր, բայց միթէ այս պարագային մէջ օրէնքը քուէի դնելու խնդիր կա՞յ: Ամենքս ալ գիտեմք թէ բացառիկ դիրքի մը մէջ կը գտնուիմք այժմ, արդ երբ այս վիճակին մէջ Վարչութեան Ատենապետ Էֆ.ին ստիպողաբար խօսք կը խնդրէ, բանաւոր է միթէ զլանալ զայն ի նմանէ, առանց գիտնալու թէ ի՞նչ է իւր խօսելիքը. գուցէ անմիջական յայտնութեան կարօտ խնդրոյ մը կը վերաբերի:

ՊԱԼԵՕԶԵԱՆ Լ. ԷՖ. — Երեսփ. Էֆ. ի խօսելիքն ինչ որ ալ ըլլայ, խնդիր չը կրնար ըլլալ, և այս տեսակ բացառիկ պարագայից մէջ իսկ, օրինաց տրամադրութենէն չեմք կրնար շեղիլ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Պալեօզեան Էֆ. այս տեսակ բացառիկ պարագայից մէջ Վարչութեան Ատենապետ Էֆ. ի խօսք տալով, օրէնքն չեղած չեմք լինիր, փասն զի մեր Երեսփոխանքս այժմ կը ձգեմք կերթամք, իսկ Ազգային գործերն անիշխանութեան չի մատնուելու համար, Վարչութեան ներկայութիւնն անհրաժեշտ է, և եթէ Սա ի հարկին չի կարենայ խօսք առնուլ, կրնայ իւր արժանապատուութիւնն վիրաւորեալ նկատել և ան-

միջապէս հրաժարիլ, որեմն հարկ է իբր բացառիկ պարագայ՝ թողու որ խօսի Երեսփ.:

Հետևաբար Ատենապետ Էֆ. քուէի դնելով, Ժողովն մեծամասնութեամբ ԿՈՐՈՇԷ իբր բացառիկ պարագայ մը լսել զԵրեսփ. Էֆ.:

Վարչութեան Ատենապետ Էֆ.ին հետեւեալ գրաւոր հրաժարականն կընթեռնու:

Տեարք Երեսփոխանք,

Սահմանադրական տարեշրջանը սկսած պահուն, Վարչական Խորհրդոյ անդամք, պարտ կը համարին յայտարարել, թէ պատկառելի Ժողովդ պէտք է նկատողութեան առնու, նոր վարչութիւն մը կազմելու ստիպողականութիւնն, վասնզի այս պահուս ըստ օրինի վարչութիւն չի կայ:

Արդէն անցեալ տարի, Վարչական Խորհրդոյ անդամակցաց գրեթէ ամենքը զանազան անձնական պատճառներով հրաժարական մատուցին, սակայն Բարձրաշնորհ Ս. Պատրիարք Հօր ստիպողական առաջարկութեանը վրայ, մեծ զոհողութեամբ յանձն էին առած իրենց պաշտօնավարութիւնը քիչ մը ատեն ևս շարունակել: Ուստի Վարչական Խորհրդականք որոշած էին առաջարկել Երեսփոխանական Ժողովոյ, Պատրիարքական պաշտօնն, ընդ նմին և Ազգ. Վարչութիւնն չըջալատող դժուարութիւններէն զանոնք ազատելու հիմնական դարմաններ, և սոցա ստիպողականութեան հարկն բացատրելէ, և ինչպէս կը յուսար Ժողովոյդ հաւանութեան բովէն անցնելէ ետեւ, խմբովին հրաժարիլ, տեղի տալով նոր վարչութեան մը որ անշուշտ աւելի աշխոյժով պիտի գործէր: Հետևապէս երբ իւր այս նպատակաւ պատրաստած ծրագիրն, իբրև յարակից ելև-

մըտացոյցի խնդրոյն, օրակարգին կապասուէր ներկայեցու համար, յանկարծ Բարձրաշնորհ Սրբազան Պատրիարք Հայրն կանխեց իւր հրաժարականը, յանձնարարելով մեզ շարունակել մեր պաշտօնն ընդ նախագահութեամբ Կրօնական Խորհրդական և Պատրիարքական փոխանորդ Պէր. Հարց, մինչև ցընարութիւն իւր յաջորդին, որպէս զի Ազգը անխնայութեան չի մատնուի:

Թէպէտեւ պահ մը շուարեցաւ Վարչութիւնըս, բայց նկատելով թէ ո՛րչափ ծանր, որչափ փափուկ և տաժանելի ալ ըլլար վարչական պաշտօնավարութեան շարունակութիւնն այսպիսի պարագայի մը մէջ պարտաւոր էր յակամայիցս համակերպիլ Ն. Սրբազնութեան յանձնարարութեան, նա մանաւանդ որ սոյն միջոցին սրտկառելի ժողովդ Վարչութեան վրայ ունեցած վստահութեան մասին մեծ ապացոյց մը տուաւ, Պատրիարքական պաշտօնին զըժուարութիւններն բառնալու և զՆորին Սրբազնութիւնն իւր անթուր վերադարձնելու համար Առնետակետաց Դիւանին յանձնուած փափուկ պաշտօնին Վարչական Խորհուրդս ալ գործակից նշանակելով:

Իրոց այս վիճակին մէջ, պարտք սեպեց Վարչութիւնս շարունակել իւր սրտաշունք և կրնայ վստահացնել զՁեզ թէ իւր պարտքը խղճի մտքը կատարած է, տնօրինելով ընթացիկ և տնօրինողական գործերն և մնացեալները վերադարձնելով Ն. Սրբազնութեան ներկայութեանը: Ուստի կը փութայ այժմ յայտարարել թէ պատրաստ է միշտ, երբ որ ժողովդ կամք յայտնէ, իւր սրտաշունքավարութեան միջոցին տեղի ունեցած բոլոր դէպքերուն նկատմամբ հարկ եղած բացատրութիւններն տալ, թէ Բարձր Ս. Պատրիարք Հօր հետ համախորհուրդ տնօրինած լինի զանոնք և թէ առանձինն: Վասն զի Վարչական Խորհրդոյ պարտքն եղած անձնական կամ հաւարական համարաւորութիւնն ըստ օրինի, շանհետանար իւր հրաժարմամբ կամ տալմանութեամբ իրոցման սրտաւառ դատարմամբն, և

Երեսփոխանական Ժողովոյ վճիռը կերթայ կը գտնէ զանոնք ո՛ւր որ ալ ըլլան:

Արդ՝ մեր պաշտօնավարութեան շրջանին մէջ, յորում մեծ մասամբ Պատրիարքական հրաժարականի, և ուրիշ ծանրակշիռ խնդիրներով զբաղեցանք, եթէ չկրցինք մեր փափաքած ծառայութիւնն մատուցանել Ազգին, զոնէ մեր յաջորդաց պաշտօնն հարթեցինք Ազգին ցաւերն բուժելու համար պէտք եղած դարմանն ցոյց տալով:

Յաջողեցանք ապացուցանել որ թէպէտեւ Սահմանադրութիւնն այնչափ պարզ և զիւրաշարժ գործիք մը չէ որ կարելի ըլլայ առանց դժուարութեան գործադրուիլ, այսու ամենայնիւ այնպիսի կնճաղից մեքենայ մը չէ որ շարժելու համար Ազգին կարողութենէն բարձր ոյժի մը պէտք ունենայ: Ազգը կարող է նորա ոգւոյն հետեւելով ժամանակին պահանջման համեմատ զայն ձեւակերպել:

Ուստի այս մասին ստիպողական եղած պէտքն, որ գլխաւորաբար Կեդր. Սնտուկի հասոյթին առատանալէն և անուղղակի տրոյք ընդհանրացումէն կախումն ունի մեծաւ մասամբ, Ազգ. Ժողովդ որոշուելէ ետեւ, յաջորդ Վարչութեանց կը մնայ ի գործ դնել հետզհետէ բոլոր այն տրամադրութիւնք, զորս ժամանակին պիտոյքն և Ազգին վիճակը կը պահանջեն:

Եւ եթէ այս տութիւն յանձնարարութիւն մը ընել թոյլատրէ զՁեզ, պատկառելի Ժողովդ, չի պիտի վտրանիմք խնդրել, որ տակաւին մեր յաջորդներէն ալ չի պահանջէք, վարչական մեքենային համար բաղձացեալ կատարելագործութիւններն, մինչև որ Պատրիարքարանը կարենայ ըստ արժանւոյն վարձատրել անհրաժեշտ եղած թշակաւոր պաշտօնեացիները:

Արդ՝ պիտի տեսնէք որ անցեալ շրջանին մէջ, ուր կնճաղից զանազան խնդիրներու բացառիկ հանգամանօք զՎարչութիւնն տարապայման եղանակաւ զբաղեցուցին, այսու ամենայնիւ

1. — Ազգ. Կրթական օրինաց ծրագիրն ձեռնհաս Տեսչութեան կողմանէ ներկայացաւ Ժողովոյդ:

2. — Կրօնային տեսչութեան կողմանէ և ընծայարանի մը հաստատութեան ծրագիրն պատրաստուեցաւ:

3. — Ազգ. Վարչական Խորհրդոյ ներքին կանոնաց ծրագրին խմբագրութենէն ի դատ Դատարան Տեսչութեան կողմանէ պատրաստուեցան զանազան օրինական ծրագիրք, որք կը պարունակեն դատավարութեան եղանակը, Ազգային Դատարանաց կողմանէ տրուած վճռադրոյ, Դիւանատանց և Թաղական Խորհրդոյ կողմանէ կատարուած վուերացմանց յատկացեալ տրոյք օրէնքն, ամուսնական վիճակագրութեան, ամուսնախօսութեան և սոյն պատճառաւ պատահած վէճերու ինչպէս նաև ամուսնական օրինաց վերաբերեալ սլաւոթական տրամադրութիւնք:

Սոյն օրինական ծրագիրք որք պատրաստուեցան, բայց Վարչութիւնս պատահութիւն չունեցաւ Ժողովոյդ նկատառման ենթարկել, անշուշտ մեր յաջորդներն նոյնութեամբ կամ բարեփոխելով պիտի ներկայացնեն Ձեզ ներկայ շրջանիս մէջ:

Տեսքը Երեսփոխանք, գիտակ մեր թերութեանց, պաշտօնավարութեան սկսած օրերնիս ուրիշ բանի վրայ չէինք դրած մեր յոյսն, եթէ ոչ Բարձրաշնորհ Սրբազան Պատրիարք Հօր ազգասիրական եռանդին եւ Նորին Սըրբազնութեան ինչպէս և Ձեր վստահութեան վրայ՝ զորս լիովին վայելեցինք, և որոց մասին մեր երախտագիտութիւնը մատուցանելու չեմք դանդաղիր:

Միանգամայն պարտք կը համարուիք շնորհակալութիւն յայտնել, թէ սատ ի կեդրոնի և թէ ի դաւառս մեզի գործակցող ազգային ամեն կարգի և անտիճանի պաշտօնատարներէն, որք սակաւ բացառութեամբ իրենց պաշտօնն խղճի մտքը կատարելով, Վարչութեանս օժանդակեցին, այսպիսի փափուկ պարագայից մէջ:

Եւ արդ կուգամք ազգային տարեշրջանին հետ կնքել և մեր սրտաշունքավարութեան ընթացքն, ապահովելով զՁեզ, թէ Ազգին իրական շահերն միայն կէտ նպատակի ունենալով գործեցինք, և եթէ կարծողներ կան թէ սխալմանք տեղի ունեցած են, զանոնք ցոյց տալու նպատակաւ եղած օրինաւոր վիճարկանութիւններէն երբէք չեմք խորշիր և կը թողու մեր արարքը Ազգ. Երեսփոխանութեան անաչառ դատարանին, ինչպէս նաև բոլոր ուղղախոհ ազգայնոց ազատ քննադատութեանը:

(Ցեռ ընթերցման)

ՊԱԼԵՍՏԻՆԱՆ Լ. ԷՖ. — Այժմ որ լսեցինք Վարչութեան Առնետակետի Էֆ. ըսել իրենք, կառաջարկեմ որ զայնս առանց նըկատողութեան առնուլ շնորհակալ լինիմք Վարչութենէն և մենք մեր գործն շարունակեմք:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Վարչութիւնը չէ կարող իւր հրաժարականը ժողովոյս բերել, այլ ուղղակի Ս. Պատրիարք Հօր պէտք է մատուցանէ զայն, և արդէն Վարչութեան ժամանակը ըստ օրինի լրացած է, բայց մինչև իւր յաջորդին ընտրութիւնը իրք տեղապահ գալիք Վարչութեան պէտք է որ գործէ և չեմ յուսար Վարչութեան ազգասիրութենէն՝ որ այսպիսի պարագայի մէջ քաջութի պաշտօնէն:

ԵՈՒՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — (Առնետակետ Վարչութեան) Վարչութիւնն պարտք կը համարի ծանուցանել այսօր Ժողովոյդ թէ՛ իւր երկամեայ պաշտօնավարութեան շրջանն լրացած է, և թէ ինքն կը հրաժարի, բայց չըսէր թէ՛ ըստ որում կը հրաժարի, գործերն երեսի վրայ թողլով անմիջապէս կը ձգէ կերթայ, այլ կը խնդրէ որ յառաջիկայ շրջանի համար նոր Վարչութեան մը ընտրութեանը ձեռնարկուի անյատալ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ապա ուրեմն, մինչև որ Ձեր հրաժարականը մատուցանէք Ս. Պատրիարքին, ժողովն կը խնդրէ որ գէթ առժամեայ կերպիւ վարէք վարչական գործերը:

ԵՈՒՍՈՒՖԵԱՆ Տ. ԷՖ. — Արդէն յայտնեցի թէ՛ մինչ մեր յաջորդին ընտրութիւնն՝ գործերը անխիստանութեան չի մատնելու համար, պատրաստ եմք մեր պաշտօնին զընդը գտնուիլ:

Վարչութեան Ատենապետ Էֆ. ի սոյն յայտարարութեան վրայ՝ Ատենապետ Էֆ. ի դիմաց ժողովոյն, շնորհակալութիւն կը յայտնէ Վարչութեան և խնդիրը փակուելով ժողովը կանցնի իւր Օրակարգին:

Գ.

Քննութիւն եւ վաւերացումն երեսփոխանական ընտրութեանց.

Ատենապետ Էֆ. յայտարարելով թէ՛ ժողովն պիտի զբաղի երեսփոխանական ընտրութեանց վաւերացմամբ, կը հրաւիրէ Ատենապետ Էֆ. ին ընթեռնուլ սոյն ընտրութեանց մասին Վարչութեան բերած ծանօթագիրն:

Վսեմաշուք Ատենապետ Էֆէնտի Ազգային ժողովոյ,

Երեսփոխանական նորոգ ընտրութեանց մասին Ազգային կեդրոնական Վարչութեան կողմէ ասկէ առաջ դաւառական վիճակներն յուղարկուած շրջաբերական հրահանգին համաձայն՝ վիճա-

կաց ոմանց կողմէ նոր ընտրութիւններ կատարուած և տեղեկագրերն յուղարկուած են, որոցմէ յայտնուած է թէ՛

Ա. Տրապիզոնի Գաւառական Ընդհանուր ժողովոյ կողմէ Երեսփոխան ընտրուած է,

1. Գրիգոր Էֆ. Գալէմբեարեան, որ իւր յանձնառութիւնն յայտնած է զընդ,

Բ. Բաղէշի Գաւառական Ընդհանուր ժողովոյ կողմէ Երեսփոխան ընտրուած է,

2. Խաչիկ Էֆ. Սարաճեան, որ սակայն չհաւանիր ստանձնել երեսփոխանական պաշտօնն, առարկելով թէ արժանիք և անկախ դիրք չունի,

Գ. Քէօթահեայի Գաւառական Ընդհանուր ժողովոյ կողմէ Երեսփոխան ընտրուած է,

3. Աւետիս Էֆ. Թնկրեան, որ կը յօժարի ընդունիլ սոյն պաշտօնն,

Դ. Եւդոկիոյ Գաւառական Ընդհանուր ժողովոյ կողմէ Երեսփոխան ընտրուած է,

Կ. Գէորգ Էֆ. Ասլանեան, որու յանձնառութիւնն ապահովեալ է,

Ե. Ատանայի Գաւառական Ընդհանուր ժողովոյ կողմէ Երեսփոխան ընտրուած է,

Յ. Մինաս Էֆ. Չերազ, որ կընդունի սոյն պաշտօնն:

Ազգային Վարչական Խորհուրդն յիշեալ նորընտիր Երեսփոխանաց ընտրութեան հանգամանքները քննելով՝ ըստ ամենայնի համաձայն կը գտնէ Ազ-

գային Սահմանադրութեան տրամադրութեան տրամադրութեանց, և կը փութայ ներկայ ծանօթագրով ընտրութեանց տեղեկագրերն և ընտրելոց յանձնառութեան գրերն՝ ինչպէս նաեւ անոնցմէ միոյն հրաժարագիրն ներկայել Պատկառելի ժողովոյդ ի քննութիւն և ի պարտաւ պատշաճ անօրէնութիւն:

Ի դիմաց Վարչական Խորհրդոյ

Վ. Ատենապետի Ատենապետ

Մ. ՄԱՄԻԿՈՆԵԱՆ Տ. ԵՈՒՍՈՒՖԵԱՆ

18 Մայիս 1882

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այժմ՝ որ լսեցիք Վարչութեան ծանօթագիրն, պիտի ձեռնարկեմք մի առ մի ընթեռնուլ Գաւառական ժողովոց տեղեկագրերն և ընտրելոց յանձնառողներն:

Տեղեկագիր Տրապիզոնի Գաւառական ժողովոյն

Ամենապատիւ Սրբազան Հայր, Նախագահ Կեդրոն. Երեսփոխանական ժողովոյ.

137 թուահամար և 23 Ապրիլ ամսաթիւ գրութեամբ ըստ հրամանի Ձեր Բարձր Սրբազնութեան և հրահանգի Ազգային Սահմանադրութեան՝ Գաւ. Երեսփոխանական ժողովն Մայիսի 31 ի նիստ հրաւիրուեցաւ իրենց եկեղեցեաց դռներն 24 Մայիս ամսաթուով ծանուցարներ կախուելով. և 27 Մայիսի թուով յատուկ հրաւիրագրեր ուղղելով առ երեսփոխան անդամ. յորում կարգ խնդրոց ցուցուած էր Ա. ընտրութիւն Մայր Դիւանի, Բ. ընտրութիւն Կեդրոնական Երեսփոխանի:

Դժբաղդաբար որոշեալ կիւրակէ օրն մեծամասնութիւն չ'զոյտնալով ատեն

չ'բացուեցաւ և պարտաւորեցանք Յունիս 3 ի վերստին հրաւիրել զերեսփոխանս 7 ներկայիս գումարելի ժողովոյն:

Նոյն օրն երեսուն և ինն երեսփոխան անդամներէ քսան և երկուքն ներկայացած և ըստ օրինի մեծամասնութիւն զոյացած լինելով, ատենաւ բացուեցաւ ժամ 6 իշդ. 7 ին, և հետեւելով օրակարգին, ձեռնարկեցաւ Մայր Դիւանի ընտրութեան. որով քուէից բացարձակ առաւելութեամբ ընտրուեցան, Ատենապետ Պօղոս Էֆ. Կիւրճեան 41 քուէ, Ատենապետ Գաւառ Էֆ. Խանէտանեան 43 քուէ, Փ. Ատենապետ Յովհաննէս Էֆ. Յովսէփեան 46 քուէ, Փ. Ատենապետ Կարապետ Էֆ. Յովսէփեան 44 քուէ:

Ատենապետի ընտրութեամբ քուէից որոշ առաւելութիւն չ'զոյանալով կրկին քուէարկութիւն կատարեցաւ և 9 ի դէմ 41 քուէով Պօղոս Էֆ. Կիւրճեան ընտրեցաւ:

Մայր Դիւանի կազմութենէ վերջ ընտրելի ներկայացուած երեք անձանց վրայ կեդրոնական երեսփոխանի ընտրութիւնն կատարուելով 47 քուէից բացարձակ առաւելութեամբ կեդրոնական Երեսփոխանական ժողովոյ անդամ՝ ընտրուեցաւ Գրիգոր Էֆ. Գալէմբեարեան՝ որ այժմ՝ բնակի ի Կ. Պօլիս Թահթաղէ: Գուէարկութեանց օրինաւորութիւնը տեղեկագրելով հանդերձ խնդրեմք հաւատանլ արդիւնքն:

Որով մնամք յամենայնի անձնուէր և խոնարհ որդիք Ձեր Բ. Սրբազնութեան

Նախագահ Գաւ. Ընդ. Երես. ժողովոյ

Մատթեոս եպս. Նազարեան

Ատենապետի Փ. Ատենապետ

Դ. Խանէտանեան Յովհաննէս Յովսէփեան

9 Յունիս 1881

Տրապիզոն

Յանձնառագիր քննություն

Դերապատիւ Ս. Փոխանորդ Հայր

Ընկալայ Զեր աղգասէր Դերապատիւ թիւ 22 ամսաթիւ օրհնեղութեան ծառայողներն, որով հաճեր էիք զեկայա նել Տրապիզոնի Գաւառական Բնդ. Ժողովոյ վարչական տեղեկագրոց համեմատ նոյն վիճակի աղգայնոց կողմէն նուազանսնուէրնուդ ներկայացուցիչ երեսփոխանի մ'ընտրութիւնը, առ որ պատուարժան գաւառացի աղգայնոցս մասնաւոր շնորհակալիքս արտայայտելէս և միանգամայն նոցա զիս հրաւիրած բարձր պաշտօնը ստանձնելէս յառաջ, աւելորդ չեմ համարիր Զեր աղգասէր Դերապատիւ թիւ 22 ամսաթիւ օր Մեծ. գաւառացիքս՝ իրենց սոյն ընտրութեան մէջ կերպով մը սխալած են, ըստ որում նախապէս կը խոստովանիմ այսպիսի վախճան պաշտօնի մ'երբէք ձեռնհաս չըլլալս՝ հետեւապէս պատկառելի ժողովոյդ մէջ աթոռ մ'ունենալու անարժանաւորութիւնս, երրորդապէս անձնական դրաղմանցս չիներելը և որ գլխաւորն է սիրելի աղգայնոցս բաղձանայ համապատասխան և թէ ըստ արժանուոյն զայն իկեր արկանելու անկարող ըլլալս, բայց որովհետեւ յիշեալ վիճակնիս ցարդ բաց էր մնացած և չունէր աստ իրեն համար մի երեսփոխան ի հարկին զինքը ներկայացնող, վասն որոյ խանդ մը որ կ'ստիպէ յայտմ պարագայի զիս մէկ աստիճանի անտարբեր չի մնալ, և թէ սոյն նշմարելի բացը գոցելու նպատակ և եթ' անձնուէրնիդ կ'ստատաւորէ զայն կամայ յաւանայ ստանձնել, ջանալով իւրովսա-

նրն ծառայել նորա բարոյական շահույ և աղգօգուտ յառաջագիւտութեան համար, ապա ուրեմն անհրաժեշտ պահանջում մը և թէ անհատական պարտք մ'է որ ըստ ինքեան կը գրաւէ մարդոց խելոցը ի գլխաց աղգի աշխատիլ և կարեւոր պարագայից մէջ նորա օգտին գէթ երկրորդապէս թարգման և կենդանի արձագանք մ'ըլլալն սիրել:

Արդ սոյն ընտրութեան առթիւ պարտաւարտանաճ անօրինութիւնն Զերդ Դերապատիւ թիւ 22 ամսաթիւ օր Մեծ. գաւառացիքս և պատկառելի ժողովոյդ որոշմանը թողլով:

Ընդունեցէք, Դերապատիւ Տէր, խորին յարգանայս և խոնարհ ակնածութեանցս հաւատովն, որով ինձ պատիւ համարիմ

Մնալ Զերդ Խ. Մ.
Գրիգոր Պ. Գալեմբեարեան

Տրապիզոնի տեղեկագրոցն վրայ որ և է զխոստովան մը չիմեւով, Ատենապետ Էֆ. քուէի կը գնէ և ժողովը կ'ընտրուի Գրիգոր Պ. Գալեմբեարեան:

Հետեւապէս Ատենապետ Էֆ. Աղգ. երեսփոխան կ'ընտրուի:

Գրդ Էֆենտի Քալեմբեարեան

Տեղեկագիր Բաղնի Գաւառական Ժողովոյն

Ամենապատիւ Սրբազան Հայր

Զեր բարձր Սրբազանութեան տեղացս Խառն Ժողովոյ ուղղած 23 Ապրիլ 1877 թիւ նամակ ժողովս ստացաւ որով հրահանգ կուտայիք անյապաղ գաւառիս երեսփոխան մը ընտրել և արգիւնքն տեղեկագրել ի Պատրիարքարանդ:

Գաւառական Ժողովս նամակը ըստանալուն պէս անյապաղ գումարուելով երեսփոխանի ընտրութեան ձեռնորկեց և քուէից բաժարձակ առաւելութեամբ Սարաճեան Մեծադատի Խաչիկ Էֆ. ին գաւառիս երեսփոխան ընտրուեցաւ:

Վստահ լինելով Սարաճեանի հանրածանօթ ժողովրդականութեան վրայ որ սիրով պիտի ընդունի մեր հրաւերն որուն համար իրեն ևս առանձին նամակ դրած եմ:

Մնամք ամենախոնարհ ծառայ Զերում Բ. Սրբազանութեան

Դիւան Ընդհ. Գաւառական Ժողովոյ նախագահ
Առժամանակեայ Տեղապահ
Արիստակես Վ. Տէր Սարգսեանց
Ատենապետ
Բարձր Խ. Խաչիկեան Բ-ի Բ-ի Մ. Խաչիկեան

10 Յունիս 1881
Ի Բաղէշ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Եթէ ժողովը այն տեղեկագրին վրայ զխոստովան չունի և ընտրութիւնը օրինաւոր կը նկատէ, կը խնդրեմ որ իւր ձեռամբարձ հաւանութիւնը յայտնէ: Սակայն հարկ է ինձ ծանուցանել թէ ընտրեալն Խաչիկ Սարաճ Էֆ. պատճառարանաւ հրաժարողի մը յղած է զոր ժողովոյդ որոշման կենթարկեմ:

Պատճեն Խաչիկ Սարաճ Էֆ. ի հրաժարագրոյն:

Դերապատիւ Հայր

Ընդունելու պատիւ ունեցայ այսօր Դեր. Հայրութեանց Յունիս 30 թուագրեալ և 480 թուով մէկ պաշտօնագիրն որով Բաղէշի վիճակէն կեդրոն երեսփոխան ընտրուիլս ծանուցանելով յանձնառութիւնս կը պահանջէք:

Ահաւասիկ իմ խոնարհ պատասխան

Երեսփոխանութեան համար երկու կարեւորագոյն պայմաններ կան որք անհրաժեշտ կերպով հարկաւոր են քուէի և քուէի քուէի:

Դժբաղդաբար սոյն կրկին պայմաններէն տակաւին թափուր գտնուելովս կը խնդրեմ բարեհաճիք ընդունիլ իմ հրաժարական, որպէս զի իմ տեղ ընտրուի մի այնպիսի անձ որ հաւատարմապէս ունենայ զայնս, և աղգիս ամենէն մեծ ժողովն իւր նշանակութիւնն և պատկառանքը պահէ:

Մատչելով ի համայնք սրբ. աջոյդ և մնամ ամենախոնարհ ծառայ

Խ. Յ. Սարաճեան
3/15 Յուլիս 1881
Կ. Պոլիս

ԻՖԷՔՃԵԱՆ Է. ԷՖ. — Ներքին կանոնադրոյ Գ. յօդուածն կրտէ թէ երբ յանձնառագիր չիլոյ՝ չէ կարելի վաւերացնել ընտրութիւնն, ինչպէս ուրեմն կարելի է մեկ խնդիր ընել այդ ընտրութիւնն, քանի որ ընտրեալն հրաժարած է:

ՄԷԼԻՔԵԱՆ Մ. ԷՖ. — Թէև մեր օրէնքն կը տրամադրէ, ընտրեալին յանձնառագիրն չեղած ժամանակ չվաւերացնել ընտրութիւնն, սակայն իւր բողոքութեան կատարեալ մերժել սոյն հրաժարագրին և յանձնարարել Ս. Նախագահին որ աս ինքն կոչելով Խաչիկ Սարաճ Էֆ. համոզէ զինքն եւս տունել տալու համար իւր հրաժարականը:

ՄԷԼԻՔԵԱՆ Մ. ԷՖ. ի առաջարկութիւնն կրկնուելով երեսփոխանոց ոմանց կողմանէ ևս, Ատենապետ Էֆ. քուէի կը գնէ զայն որ կ'ընտրուի միաձայնութեամբ: Հետեւապէս Ս. Նախագահին կը յանձնուի յորդորել զԷֆ. Սարաճ եւս անուր իւր հրաժարականն:

Բարձրագոյն Սրբազան Պատրիարք
Հայր Նախագահ Ազգային կեդրոնական
Վարչութեան

Բարձր Սրբազան Տէր

Ըստ Ապրիլ 26 թուականաւ և 157
թուահամարաւ գրեալ հրահանգի Ամե-
նապատիւ Բարձր Սրբազանութեան Չերոյ
Քէօթահիոյ գաւառին Պօլսոյ հրաժար-
եալ երեսփոխան Մեծ. Տօքթօր Փափագ-
եանի տեղ ուրիշի մը ընտրութեան դո-
ժը կատարելու համար այսօր ի 19 Յու-
նիսի Գաւառական վարչութիւնս իւր
տետեանը կազմեց մեծամասնութեամբ
անդամոց, այն է տասն և վեց երեսփո-
խանաց ներկայութեամբ և չորից և եթ-
րացակայութեամբ, և ի ստորեւ յիշուած
երկոց ընտրելի անձանց վրայ գաղտնի թը-
ուէարկութիւն ընելով՝ որ ամենայն ճշ-
դութեամբ և օրինաւորութեամբ կատար-
ուած է հետեւեալ արդիւնքը գտաւ։

Տաւ 10 քուէ ստացեալ Մեծ. Աւե-
տիս Էֆ. Թընկըրեան սեղանաւոր Վա-
նեցի։

Եւեւ 3 քուէ ստացեալ Մեծ. Սար-
գիս Էֆ. Չըրաճեան ոսկերիչ։

Եւեւ քուէ նոյնպէս ստացեալ Մեծ.
Յովակիմ Էֆ. Անդրէասեան, որով ինչպէս
յայտ է բացարձակ առաւելութեամբ թը-
ուից Մեծ. մահտերի Աւետիս Էֆ. Թըն-
կըրեան վանեցին Քէօթահիոյ գաւառէն
Երեսփոխան ընտրուելով, ներկայ տեղե-
կագործի գամք առ Բարձր. Սրբազնու-
թեան Չերոյ յայտնելու գաւառիս ձայնն և

Մնամբ Ամեն. Բարձր. Սրբազնու-
թեան Չերոյ ամենախոնարհ որդիքս

Առաջնորդ Կուտինայ
ԳԵՈՐԳ Ե. ՎԱՐԴ.

Ի դիմաց Երես. Ժողովոյն Քէօթահիոյ

Ատենադպիր Ատենապետ

Յ-Դ-Մ-Է-Ն Օ-Ն-Ն-Ն-Ն-Ն Յ-Է-Է-Մ-Ն-Է-Է-Ն

1884 Յունիս 19

Կուտինայ

Յանձնառագիր ընտրելոյն.

Գերապատիւ Ս. Հայր

Պատիւ ունեցայ ընդունիլ Չեր Գե-
րապատութեան 2 Յունիս 1885 թուա-
համարաւ մի գրութիւնը, որով Քէօթահի-
ոյ վիճակէն երեսփոխան ընտրուիլս
զեկուցանելով՝ կը հրաւիրէր զիս իմ յանձ-
նառութիւնս յայտնել։

Անձնական ծանր զրազմունքներս թէ
և տրամագիր չ'էին կարող ընել զիս ըս-
տանցել սոյնպիսի մի փափուկ պաշտօն,
սակայն Քէօթահիոյ պատուարժան ընտ-
րողոց ձայնը յարգելու և որ առաւելն
է՝ սիրելի Ազգիս իմնական ծառայելու
համար կընդունիմ՝ սիրով ինձ ընծայուած
պաշտօնն, խոստանալով զայն խղճի մը-
տօք կատարել։

Ընդունեցէր Գերապատիւ Հայր, այս
ստիժի իմ խորին յարգանացս հաւատ-
արին։

Որով Մեամ

Ազգիս Անձնուէր

Ա-Է-Է-Է-Է-Է-Է-Է

13 Յունիս 1884

Կ. Պօլիս

Ժողովն սոյն տեղեկագրոյն վրայ որ և է
զիտարութիւն մը չունենալով և ընտրութիւնն
օրինաւոր նկատելով, Ատենապետ Էֆ. քուէի
կը դնէ և ժողովը ԿԸՆԴՈՒՆԻ զայն։ Հետեւ-
որար Ատենապետ Էֆ. Ազգ. Երեսփոխան ԿԸ
ՀՈՉԱԿԷ

Աւետիս Էֆէնտի Թընկըրեան

Տեղեկագիր եղովիոյ Գաւառական Ժողովոյն.

Եւդոկիոյ Գաւառական Ընդհանուր
Ժողովոյ կողմէ 1884 յունիս 10 թուակա-
նաւ Պատրիարքարան հասած տեղեկա-
գրէն օրինակուած։

Քաղաքիս Գաւառական Ընդհանուր
Ժողովը արտաքոյ կարգի նիստ մ'ըրաւ,
Յունիս 3ին, ընդ նախագահութեամբ Ա-
ռաջնորդական փոխանորդ Տէր Պօլսո քա-
հանայ Մէօհտէմէթեանի։

Իւր օրակարգն էր.

Ա. Կ. Պօլսոյ երեսփոխանական Ընդ-
հանուր Ժողովոյ համար Երեսփոխանի մը
ընտրութիւնը.

Բ. Ամբաստանութիւն Առաջնորդի։
Չեր Սրբազնութեան Ապրիլ 25 և
Յունիս 15 ամսաթիւերով հրամագրե-
րուն համեմատ՝ Գաւառական Ժողովս
ըստ օրինի եռապատիկ ցանկ մի պատ-
րաստելով՝ քուէարկութեան ձեռնար-
կեց և 17 քուէից Ծովը, այսինքն քուէ-
ից բացարձակ առաւելութեամբ, Կ. Պօլ-
սոյ երեսփոխան ընտրեց Տիար Գէորգ
Ասլանեան, որդի Եւդոկիացի Մանուկ
Էֆ. Ասլանեանի։

Դիւան Ընդհ. Ժողովոյ

Ատենադպիր

Ատենապետ

Յ. Կ. Պոլս-Է-Ն ԳԷՐԳ Գ. ՄԷՖԷԷ-Ն

84 Յունիս 10

Առաջնորդարան Հայոց

Եւդոկիոյ

Յանձնառագիր ընտրելոյն.

Գերապատիւ Հայր

Պատիւ ունեցայ ընդունիլ Չեր հրա-
ւիրագիրն որով կը բարեհաճէր ծանու-
ցանել թէ Եւդոկիոյ Գաւառական Ժո-
ժովն երեսփոխան ընտրած է զիս։ Ներ-
կայիս կը փութամ գալ յայտնել թէ ե-
րախտապարտ կընդունիմ հայրենակցացս
կողմանէ ինձ տրուած քուէն և կը խոս-
տանամ ըստ իմ կարողութեան պաշտ-
պանել ազգային շահերն և կատարել ե-
րեսփոխանական պարտաւորութիւնն։

Ընդունեցէր Գերապատիւ Հայր,
խորին յարգանացս հաւատարմքն

ԳԷՐԳ Մ. Ա-Է-Է-Է-Է-Է

28 Դեկտ. 1884

Աերա

Սոյն տեղեկագրոյն վրայ ես որ և է զի-
տարութիւն մը չլինելով, և ընտրութիւնն օրի-
նաւոր նկատուելով, Ատենապետ Էֆ. քուէի կը
դնէ և ժողովը ԿԸՆԴՈՒՆԻ զայն և Ազգ. Երես-
փոխան ԿԸ ՀՈՉԱԿԷ

Գէորգ Էֆէնտի Ասլանեան

Տեղեկագիր Առանցի Գաւառի
Առաջնորդական Տեղապանին.

Ամենապատիւ Սրբազան Պատրիարք
Հայր Նախագահ Ազգ. կեդր. Վարչու-
թեան

Ատանայի Գաւառ. Ժողովոյ Ատե-
նապետ Մեծ. Գրիգոր Էֆ. Պղտիկեա-
նի և նուաստիս ՚ի 19 Օգոստոսի ուղ-
եալ հրամանագրութիւն Ամենապատու-
ութեանդ ընկալայ որոյ համաձայն վի-
ճակիս Գաւառ. Ժողովը ՚ի նիստ հրաւի-
րելով Մայիս 6 ին և ՚ի նիստ 10 երրոր-
դին եկեղեցական և աշխարհական երես-
փոխանաց մեծամասնութեան, Պօլսոյ մէջ
ընկող տաղանդաւոր 3 անձինքը որք
են Մեծ. Յովհաննէս Էֆ. Նուրեան, Կա-
րապետ Էֆ. Փանոսեան, և Մեծ. Մինաս
Չերազ Էֆ. ցանկի գնելով քուէարկուե-
ցաւ, որոց եաքինը որ է Պօլսոյ Միաց-
եալ ընկերութեան Ատենապետ համա-
կամ հաւանութեամբ քուէից ընդհանու-
րըն ստանալով Գաւառ. Ժողովոյն 14 ան-
դամոց մեծամասնութեամբն վիճակիս ե-
րեսփոխան ընտրուեցաւ. սոյն նիստին
ներկայ եղող 14 անձէ Գաւառ. երեսփո-
խաններէ 14 քուէ ընդունելով, և որով
հետեւ վիճակիս Գաւառական Ժողովն 21
անդամէ բաղկացեալ էր որոց մին Գու-
յումճեան Թորոս տղան իւր մահկանա-

ցուն կնքած է, և Թրէնկեան Յովհաննէս էֆ. յիշեալ ժողովոյ կազմութեան երկուս զրաւոր հրաժարական տուած և ընտրողական ժողովէն ընդունուած չըլլալով Պատրիարքարանէդ վաւերացուեցաւ, բայց նա դարձեալ իւր հրաժարականին վրայ պնդած է, սոյն երկու անգամներէն ի զատ Յանգամբ միայն բացակայ գտնուած էին սոյն նիստէն: Ուստի համահաճ հաւանութեամբ Մ. Չերազ էֆ.ին Կեդր. վարչութեան Երեսփոխան ընտրած եմք, որոյ ազգասիրութեան վստահ լինելով կ'ուզարկեմք ի վաւերացումն՝ յերկնից կարողութիւն և և զօրութիւն մաղթելով, թեպէտ և պէտք էր ըստ Սահմանադրութեան տրամադրութեան սոյն տեղեկագրութիւնը ստորագրելը Գաւառ. Ժողովն, կամ գէթ Ատենայեան և Ատենագործի ստորագրութիւնը կրէր, որչափ նոյնը առաջարկեցի ալ նէ անլսելի եղան, աստի՛ն արձանագրութեան տուածին ստորագրած են սոյն ընտրութիւնը:

Չերումդ Ամեն Մրբաղնութեան մը նամ անձնուէր

Միքայիլ Եպիսկոպոս Ոսկերջեան
Ատանայի

1881 Նոյեմբեր 24

Սահմանադրան Ատանայ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Ինչպէս տեսաք, սոյն տեղեկագիրն ստորագրած է Ատանայի Առաջնորդական Տեղապահ՝ Մկրտչէ Եպիսկոպոս Ոսկերջեան, իսկ Գաւառական Ժողովոյ Դիւանը չէ ստորագրած, հետեւորդ օրինական պահանջներն մը կայ ըստ ներքին կանոնադրի Գ. յօդուածոյ, ընտրողական Ժողովոյ Դիւանին կողմէն չստորագրուած, և Ժող.

ժող. անկէ որչափ մը տալ այն ընտրութեան վաւերացման մասին:

ԵՌԻՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՅ. — (Ատենայեան Վարչութեան) Օրէնքին օրհանջումը իւր տեղն զացած է սոյն խնդրոյն մէջ: Ի՞նչ կը պահանջէ օրէնքն այս մասին, Գաւառական Ժողովոյ Դիւանի ստորագրութիւնը, քանի որ նոյն ժողովոյ Նախագահն կը յայտնէ թէ, Ատենայեան ու Ատենագործի արձանագրութեան տուածին մէջ ստորագրած են, ըսել է թէ՛ պահանջ մը չի մնար այս մասին և կրնամք նոյն խոյ այս ձեւին մէջ վաւերացնել Միւսա Չերազ էֆ. ի ընտրութիւնն: Եթէ՛ ստորագրոյն մէջ այս մասին բոլոր մը յերեան գայ, այն ժամանակ խնդիր կընենք:

ՊԱՆԵՕՋԵԱՆ Լ. ԷՅ. — Կողքի հասկնալ թէ, ի՞նչ կը նշանակէ Ատանայի Առաջնորդական տեղապահի սա խօսքն թէ՛ «քանիցս ստաջորկեցի Գաւառական Ժողովոյ Դիւանին, բայց ստորագրել չուզեցին», նոյն խոյ ընտրեալին՝ Պ. Մ. Չերազի արձանագրութեանը տեղն արհեստ համար հարկ է որ նախ Ժողովը լուսարանուի և ըստ այնմ՝ վաւերացնէ սոյն ընտրութիւնը:

ՄԵՐԵՒՄ-ԳՈՒԼԻ Տ. ԷՅ. — Աչի՛ր զարնող կէտն այն է որ մինչդեռ Գաւառական ընտրութեան տեղապահները Գաւառական Ժողովոյ Նախագահն և Դիւանէն ստորագրեալ պէտք է լինին, սոյն տեղեկագիրն ո՛չ միայն ստորագրուած չէ Գաւառ. Ժողովոյ Դիւանէն, այլ և զանի ստորագրող Տ. Մկրտչէ Եպիսկոպոս այս մասին հասկանալի տեղեկութիւն մը չտալէ զրոտ չիօթ՝ բացատրութեամբ մը կանցնի վրայէն: Եթէ Գաւառ. Ժողովն ըստ օրի կանոնարէն է սոյն ընտրութիւն, ինչո՞ւ իւր Դիւանը չստորագրէր տեղեկագիրն, և եթէ՛ այդ Դիւանին անդամները բնահաճութեամբ չեն ուզած ըստ ստորագրել, Տ. Մկրտչէ Եպիսկոպոս որ նոյն

ինքն Նախագահն է այդ ժողովոյն ինչո՞ւ ըստ թիւն կը արհէ այս անկերելի պարտաւանջութեան մասին և օրինական մեծ թերութիւն մը կը թողու խնդրոյն մէջ: Կը ջտիմ որ այս անպատեհութիւնը բարեկամս Մ. Չերազ էֆ. ի ընտրութեան առթիւ տեղի կունենայ: Ինչպէս կը յիշէք, Միւսա էֆ. ասկից առաջ ալ Երեսփոխան ընտրուած՝ բայց հրաժարական տուած էր՝ տարիքը չներկրուն համար: Նոյն խոյ ընտրեալին պատուոյն Նախանձախնդրութեամբ ևս կը փախարիմ որ այդ տեղեկագիրը յետո գարցնուի և արհանջուի որ ամբողջացնեն զայն փութանակի:

ԻՓԷՔՃԵԱՆ Է. ԷՅ. — Այս թերի տեղեկագրոյն վաւերացումը մեզ ցոյց պիտի տայ թէ՛ Երեսփոխանական Ժողովս իւր զրոտ օրէնքներուն համաձայն չի շարժիր, մինչդեռ պէտք է աշխատել որ նախ մենք զործադրեմք մեր օրէնքները, որպէս զի Գաւառներն ևս օրինակ տունուն:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Այսօր այդ խօսքերուն կարգը չէ, խնդրոյն վրայ խօսեցէք:

ԻՓԷՔՃԵԱՆ Է. ԷՅ. — (Զարուանակելով) Ինչո՞ւ կողքի որ չի խօսիմ երբ մեր փարմունքը ծաղու առարկայ կընէ զմեզ, դեռ կէս ժամ առաջ անկանոնութիւն մը զործեցինք Թ. Սարած էֆ. ի ընտրութեան առթիւ, կրնամք նոյն բացատրութիւնը ընել և այժմ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Անցելոյն մէջ պահուներ կարելի է տեղի ունեցած ըլլան, բայց պատուան զործողութեանց մէջ սխալ մը տեղի չունեցաւ: որովհետեւ Բաղէչի Գաւառի, և Բեափոխանական ընտրութիւնը ըստ ամենայնի օրինաւոր էր՝ ուստի Ժողովս սոյն ընտրութեան տեղեկագիր վաւերացուց, ո՛չ թէ ընտրեալն, վստն զի ընտրեալը չընդունիր այդ պաշտօնը:

Բայց այս Ատանայի տեղեկագիրն Ժողովս օրինական թերութիւն ունենալ կը նկատէ:

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱՋԱՆ — Այս ընտրութիւնը տարակցաւ չկող թէ ճշգրտութեամբ կատարուած է, բայց ձեռի պակասութիւն կայ միայն, և այս բանիս համար պէտք չէ մի արժանաւոր Երեսփոխանի վաւերացումն յետագեղ քանի որ Ատանայի Գաւառական Ժողովը ճանցեր է Մ. Չերազ էֆ. ի արժանաւորութիւնը՝ ընտրելով զինքը Երեսփոխան, և բանի որ բոլոր բարձու մը չէ դանտած ցարդ, ալիմն ընտրութիւնը կրնամք օրինաւոր համարել և վաւերացնել անմիջապէս:

ՀՈՎՈՒԵԱՆ Ղ. ԷՅ. — Քուէ կառաջարկեմ:

ՄԵԼԻՔԵԱՆ Մ. ԷՅ. — Ես այնպէս կը կարծեմ որ Ատանայի Գաւառական Ժողովը Տեղապահ Մկրտչէ Եպիսկոպոսի հետ հաշտ յարաբերութեան մէջ չ'ըլլալուն պատճառաւ, Ատենայեան ու Ատենագործին չ'են զիջած ստորագրել տեղեկագիրն: Արդարեւ ձեռական պակասութիւն մը կայ այստեղ, բայց կը ձայնակցիմ Իփէքճեան էֆ. ի և կառաջարկեմ վաւերացնել Մ. Չերազ էֆ. ի ընտրութիւնն ալ իր բացատրութիւն:

Տ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՔԱՀԱՄԻՍԻԱՆ. — Քանի որ սոյն տեղեկագրոյն մէջ ձեռական պակասութիւն մը կայ, ինչո՞ւ Վարչութիւնը ուժը ու մեաներէ ի վեր այս մասին բացատրութիւն մը չէ ուղած Ատանայի Գաւառական Ժողովէն:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Վարչութիւնը այս մասին իւր պարտքը չէ կատարած:

ԵՌԻՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՅ. — Վարչութիւնը չէր կրնար ընել այդ բանը, զի իւր իրաւասութեան սահմանին մէջ չէ: Մեր պարտքն է

բնեւ թէ՛ ընտրեալն պահանջեալ օրինական հանգամանքներն ունի՞ թէ ոչ, յանձն կ'առնու թէ ոչ, և տեղեկագրել ժողովոյդ:

ՊԱՆՈՅԱՆՆԻ ԷՅ. — Վերջին խօսք մ'աւ հաւելմ' ըսել: Եթէ Մ. Զերազ Էֆ. ընտրութիւնը քուէի գնեւ, յօժարեալ իմ քուէս պիտի տամ, վասն զի արժանաւորը եւս փոխան մը ըլլալու ամեն հանգամանքներն ունի նա, բայց կը կարծեմ որ եթէ նորա պէս անձ մը այս օրինակ միմարանութենէ մը ետքը և թերի տեղեկագրով մը Երեսփոխան ընտրուի, անպատուութիւն պիտի համարի իրեն համար:

ՅԱՅՆՆԵՐ — Քուէ չուէ:

ՊԵՐՊԵՐԱՆ Ռ. ԷՅ. — Մինաս Զերազ Էֆ. Գլխորդ արժանիքն խնդրէ վերէ, և այս մասին մեր մէջ ոչ ոք տարբեր կարծիք ունի. այն պէս որ եթէ այս ընտրութիւնն կախում ունենար այն ժողովէն, փոխառեմ թէ միաձայն հաւանութեամբ պիտի ընտրուէր նա, բայց օրէնքը կը պահանջէ որ դատաւայ Երեսփոխանը ընտրուին Գաւառ. Ժողովոյ կողմէ, և նոյս կողմանէ ընտրութիւնն հաղորդուի կեդրոնին: Աստ օրինական թերութիւն մը գործուած է ուսկայն, ընտրութիւնն ծանուցանուին ուղղակի ընտրող ժողովն չէ, այլ տաւջնորդական տեղաւորան: Որչափ որ Մինաս Էֆ. Զերազ իմ մտերիմ բարեկամներէս է, ինչպէս ամեն մարդ գիտէ, բայց եթէ կը սիրեմ Պաւստանը, ճշմարտութիւն կը սիրեմ աւելի: Ուստի ըստ իմ հարկէ որ այս թերութիւնն ուղղուի, և այն յանձն աւելի վստահութեամբ կ'առաջարկեմ զայս որչափ կը տեսնուի թէ ընտրութիւնն իրօք ըստ օրինի կատարուած է. քանզի քանի որ այս այսպէս է, ինչու Մ. Զերազ Էֆ. ընտրութեան օրինաւորութեան վրայ ընդ մը մնայ միշտ, զոր անշուշտ պատիւ չպիտի համարի իրեն: Առաջարկեմ այն օրինական թերին կրայնելու համար հեռագրել խնդրն Ատանայի:

Գաւառ. Ժողովոյ և խնդրելով հեռագրաւ իւր պատասխանն: Քանի որ Մինաս Զերազ Էֆ. ընտրութիւնն ապահով է, ինչ մնաս կայ վաւերացումն ինչ մը յետաձգելու մէջ, և այն օրինաւորութեան սիրայն համար:

ՅՕՊԱՆՆԱՆ Մ. ԷՅ. — Պէրպէրեան Էֆ. կառաջարկէ հեռագրաւ խնդրել Գաւառ. Ժողովէն որ տեղեկագրին թերին կրայնեն և պատասխանն հեռագրաւ դրին: Հեռագրաւ տեղեկագրին թերին կրայնելու հրահանգ կրնայ դրուիլ բայց պատասխանը պէտք է ստորագրեալ տեղեկագրով ժողովոյս հաղորդուի:

Երեսփոխանը յամենուստ միմարանութեան փախումը խնդրելով, Ատենայեալ Էֆ. քուէի կը զնէ Ատանայի Երեսփոխանական ընտրութեան տեղեկագրին որ 4 ի դէմ քուէով թերի կը ՀԱՄԱՐՈՒԻ Ժողովէն և կը յանձնարարուի Վարչութեան որ հեռագրաւ հրահանգ տայ Ատանայի Գաւառական Ժողովոյ օրինական լոյս պակասը ամբողջացնելով յղել զայն ընդ փոյթ:

Ատենայեալ Էֆ. Գլխորդ յայտարարելով թէ մի քանի ուրիշ երեսփոխանական ընտրութիւնը կան վաւերանալի, սակայն օրը տարածուած լինելով, յաջորդ նիստին կը մնայ անոնց վաւերացումն: Ատենան կը փակէ ժամը 6 1/2 ին, ութ օրէն վերստին գումարելու օրոյմանալ:

Ատենայեալ Պ. ՊԵՐՊԵՐԱՆ Ատենայեալ Ք. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Կրօնական գործոց խորհրդական Դեր. Տ. Սիմէօն եպիսկոպոս Սէֆէրեան					
Ներքին գործոց	»	Տիրքան Էֆէնտի Եուսուֆեան Արեւելք			
Յարաբերական գործոց	»	Միքայէլ	»	Մօմճեան	
Կրթական	»	Միքայէլ	»	Մամիկոնեան	
Դատական	»	Սերովբէ	»	Աղնաւորեան	
Տնտեսական	»	Գարեգին	»	Մէլիք	Արեւելք

ԿՐՕՆԱՅԻՆ ԱՏԵԱՆ

Դեր. Տ. Գարեգին Վարդապետ Թաթարեան		
» Տ. Յակոբ	»	Փափաղեան
» Տ. Յովհաննէս Քահանայ	»	Հիւնքեարպէյէնտեան
» Տ. Սահակ	»	Տէր Սարգիսեան

ԲԱՂԱՔԱՅԻՆ ԱՏԵԱՆ

Արիկ	Էֆէնտի	Ունճեան
Դրիդոր	»	Ներսէսեան
Թովմաս	»	Խօրասանճեան
Պապի	»	Պապօեան
Սահակ	»	Ղազարոսեան

ԳԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ՕՐԱԿԱՐԳ

Ա. Բացումն ժողովին ի Ս. Նախագահէ.

Բ. Կարգումն առժամեայ Դիւանի.

Գ. Վաւերացումն Երեսփոխանական ընտրութեանց.



Բացումն	Ժողովին	Ի Ս.
Կարգումն	առժամեայ	Դիւանի
Վաւերացումն	Երեսփոխանական	ընտրութեանց